ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1952 Общественные науки

Ա. Մաուխյան

ՄԵԾ ԱՎԱՆԴ ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԳԱՆՁԱՐԱՆՈՒՄ

Մարքսիստական-լենինյան թեորիայի գանձարանը հարստացավ ընկեր Ստալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» հանճարեղ աշխատությամբ, որը հրապարակվեց Սովետական Միության Կոմունիստական պարտիայի 19-րդ համագումարի նախօրյակին։

Ընկեր Ստալինի այս նոր աշխատությունը մարքս-լենինյան թեորիայի զարգացման, սոցիալիստական շինարարության պրակտիկ խնդիրների ճիշտ լուծման համար ունի մեծագույն նշանակություն։

Ընկեր Ստալինը բազմակողմանիորեն հետազոտելով սոցիալիստական հասարակության մեջ հասարակական արտադրության զարգացման, նրա նյութական բարիքների ավելացման ու բաշխման օրենքները, գիտականորեն մշակեց սոցիալիզմի քաղաքատնտեսության արմատական հարցերը և մարքսիստական գրականության մեջ առաջին անգամ տվեց սոցիալիզմի հիմնական օրենքի գիտական ձևակերպումը, սահմանեց սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու անհրաժեշտ հիմնական նախադրյալները։

* * *

Առաջին հարցը, որի վրա կանգ է առել ընկեր Ստալինը, այդ տնտեսական օրենքների բնույթի հարցն է սոցիալիզմի ժամանակ։

Մինչև ընկեր Ստալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության լույս տեսնելը, առանձին տնտեսագետների, փիլիսոփաների ու պատմաբանների մոտ գոյություն ուներ այն հակագիտական, ոչ մարքսիստական կարծիքը, թե տնտեսական օրենքները սոցիալիզմի պայմաններում մարդիկ կարող են ոչնչացնել, ստեղծել նորը և կամ վերափոխել ինչպես իրենց կամքն է թելադրում։

Ընկեր Ստալինը հիշեցնում է, որ չպետք է շփոթել բնության և հասարակության մեջ մարդկանց կամքից անկախ տեղի ունեցող օբեկտիվ պրոցեսները արտացոլող գիտության օրենքները կառավարության կողմից հրապարակվող օրենքների հետ, որոնք ստեղծում են իրենք՝ մարդիկ։

«Մարքսիզմը գիտության օրենքները,— ասում է ընկեր Ստալինը,— միևնույն է՝ խոսքը բնագիտության օրենքների թե քաղաքատնտեսության օրենքների մասին է,— ըմբռնում է որպես մարդկանց կամքից անկախ տեղի ունեցող օբեկտիվ պրոցեսների արտացոլում։ Մարդիկ կարող են հայտնագործել այդ օրենքները, ճանաչել դրանք, ուսումնասիրել դրանք, հաշվի առնել դրանք իրենց գործողություններում, օգտագործել դրանք հօգուտ հասարակության, բայց նրանք չեն կարող փոխել կամ վերացնել դրանք։ Նրանք առավել ևս չեն կարող սահմանել կամ ստեղծել գիտության նոր օրենքներ»[1]։

Նշելով բնության և հասարակության օրենքների մարդկանց կամքից անկախ գոյության փաստը, ընկեր Ստալինը գրում է. «Նշանակո՞ւմ է սա արդյոք,

[1] Ի. Ստալին, «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում», էջ 4։

որ, օրինակ, բնության օրենքների գործողությունների հետևանքները, բնության ուժերի գործողությունների հետևանքներն առհասարակ անկանխելի են, որ բնության ուժերի կործանարար գործողություններն ամենուրեք և մշտապես տեղի են ունենում մարդկանց ներգործությանը չենթարկվող տարերային-անոթոք ուժով։ Ոչ, չի նշանակում։ Եթե նկատի չունենանք աստղաբաշխական, երկրաբանական և համանման մի քանի այլ պրոցեսներ, որտեղ մարդիկ, եթե նույնիսկ նրանք ճանաչել են այդ պրոցեսների զարգացման օրենքները, իսկապես անզոր են ներգործելու նրանց վրա, ապա շատ ուրիշ դեպքերում մարդիկ ամենևին էլ անզոր չեն բնության պրոցեսների վրա իրենց ներգործության հնարավորության իմաստով» (նույն տեղում, էջ 4)։

Այս նշանակում է, որ շատ բնագավառներում ու դեպքերում, մարդիկ հասել են այն բանին, որ ուսումնասիրելով, ճանաչելով նրանց զարգացման օրենքները, կարողանում են ներգործել նրանց վրա և օգտագործել իրենց նպատակների համար։

Ընկեր Ստալինը հիշեցնում է հնում մեծ գետերի վարարումների ու նրանց կործանիչ հետևանքների մասին։ Հայտնի է, որ հետագայում մարդիկ ուսումնասիրելով, ճանաչելով այդ հեղեղումների պատճառները, օրենքները, անզոր չդտնվեցին դրանց առջև, միջոցներ մշակեցին հեղեղումները կանխելու և նրա ուժը անհրաժեշտ ուղղությամբ օգտագործելու համար։ Մարդիկ ջրապատնեշներ կառուցեցին գետերի հոսանքների դեմ, կառուցեցին հիդրոկայաններ՝ գետերի ուժը օգտագործելու համար։ Դրանով մարդը հասավ այն բանին, որ կարողացավ սանձահարել բնական, տարերային այդ վնասարեր ուժը և այն ծառայեցնել իր պահանջներին։

Հարց է ծագում. դրանով մարդիկ ոչնչացրի՞ն բնության օրենքները, վերափոխեցի՞ն այն, նրա տեղը նոր օրենք ստեղծեցի՞ն։ Իհարկե ոչ։ Դրանով մարդիկ կարողացան կանխել բնության օրենքի կործանիչ հետևանքները, այդ նույն օրենքի ուսումնասիրման ու ճշգրիտ օգտագործման հիման վրա։ Կարելի է ասել նույնիսկ ավելին. «բնության օրենքների որևէ խախտումը, դրանց ամենափոքր խախտումը միայն կկազմալուծեր գործը, կվիժեցներ պրոցեդուրան»,— ասում է ընկեր Ստալինը (էջ 5)։

Բնական է, որ եթե մարդիկ գաղափար չունենային տարվա տարբեր եղանակների, ժամանակի, մթնոլորտային տեղումների ավելացման ու պակասեցման մասին, և դրա հետևանքով ծովերի մակընթացության ու տեղատվության մասին, գետերի վարարումների մասին, ապա դժվար թե մարդը կարողանար ճանաչել, սահմանափակել դրանց գործողությունների սահմանները և օգտագործել իր նպատակների համար։

Նույնը պետք է ասել տնտեսական օրենքների մասին,— միևնույն է, թե խոսքը վերաբերում է կապիտալիստական կամ սոցիալիստական հասարակությանը։

«Այստեղ ևս,— ասում է ընկեր Ստալինը,— ինչպես և բնագիտության մեջ, տնտեսական զարգացման օրենքները հանդիսանում են մարդկանց կամքից անկախ տեղի ունեցող տնտեսական զարգացման պրոցեսներն արտացոլող օբեկտիվ օրենքներ։ Մարդիկ կարող են հայտնագործել այդ օրենքները, ճանաչել դրանք և, հենվելով դրանց վրա, օգտագործել դրանք հօգուտ հասարակության, այլ ուղղություն տալ որոշ օրենքների կործանարար գործողություններին, սահմանափակել դրանց գործողության ոլորտը, լայն ասպարեզ

տալ իրենց համար ճանապարհ հարթող մյուս օրենքներին, բայց նրանք չեն կարող ոչնչացնել այդ օրենքները կամ ստեղծել նոր տնտեսական օրենքներ» (էջ 5—6)։

Մարքսիզմ-լենինիզմը, ճանաչելով բնության ու գիտության օրենքների մարդկանց կամքից անկախ, օբեկտիվ գոյության փաստը, ամենևին չի ժխտում մարդու գիտակցված գործունեության նշանակությունը։

Բնության, հասարակության օրենքների օբեկտիվ գոյության ժխտումը մեզ կտանի դեպի պատահականությունների թագավորությունը, մենք կընկնենք ստրկական կախման մեջ բնության արհավիրքների ու հասարակական երևույթների նկատմամբ։

Միաժամանակ պետք է նկատի ունենալ նաև այն,— սովորեցնում է ընկեր Ստալինը,— որ հասարակության հատկապես տնտեսության զարգացման օրենքները ունեն յուրահատուկ բնույթ։ Բանն այն է, որ տնտեսության զարգացման օրենքները, ի տարբերություն բնության օրենքների, մշտական, հարատև չեն, նրանց մեծամասնությունը կապված է պատմական ժամանակաշրջանի հետ, պայմանավորված է հասարակության արտադրամիջոցների տիրապետման և նրա վրա հիմնված հասարակական բարիքների բաշխման տվյալ ձևի հետ։

Պատմական ժամանակամիջոցում արտադրամիջոցների տիրապետման եղանակի փոփոխման հետ, նրանով պայմանավորված հասարակական հարաբերությունների փոփոխման հետ միաժամանակ փոխվում են տնտեսական զարգացման օրենքները և իրենց տեղը զիջում նոր օրենքների. բայց այդ նշանակո՞ւմ է արդյոք, որ նրանք ոչնչանում են կամ վերափոխվում։ Ոչ. նրանք տնտեսակարգի փոփոխման հետևանքով կորցնում են իրենց ուժը և իրենց տեղը զիջում նոր տնտեսակարգի զարգացմանը հատուկ նոր օրենքների։

Այսպես, օրինակ, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի հետևանքով ոչնչացվեցին կապիտալիստական կարգերը մեզանում, վերացավ արտադրամիջոցների մասնավոր կապիտալիստական սեփականությունը, ստեղծվեց սոցիալիստական համաժողովրդական սեփականություն, դրանով իսկ իր ուժը կորցրեց կապիտալիստական տնտեսության զարգացման տնտեսական հիմնական օրենքը— շահույթի օրենքը՝ վարձու աշխատանքի. շահագործման միջոցով աշխատավորների հարստահարման օրենքը, կապիտալիստական կոնկուրենցիայի օրենքը և այլն։ Դրանք իրենց տեղը զիջեցին սոցիալիստական տնտեսության բնույթից բխող տնտեսական օրենքների, հիմնականում— աշխատավորների նյութական-կուլտուրական կյանքի պայմանները սիստեմատիկաբար բարելավելու սոցիալիզմի տնտեսական հիմնական օրենքին։

Ընկեր Ստալինը, խոսելով բնության և հասարակության օրենքների մասին, որպես մարդկանց կամքից անկախ, օբեկտիվորեն գոյություն ունեցող օրենքների, ասում է՝ «...Սոցիալիզմի ժամանակ քաղաքատնտեսության օրենքները օբեկտիվ օրենքներ են, որոնք արտացոլում են տնտեսական կյանքի՝ մեր կամքից անկախ կատարվող պրոցեսների օրինաչափությունը։ Այս դրությունը ժխտող մարդիկ ըստ էության ժխտում են գիտությունը, իսկ գիտությունը ժխտելով, դրանով իսկ ժխտում են ամեն մի կանխատեսման հնարավորություն,— հետևապես, ժխտում են տնտեսական կյանքը ղեկավարելու հնարավորությունը» (էջ 10)։

Մարդկանց գիտակցական, մտածված գործունեությունը հասարակական արտադրության կազմակերպման ու զարգացման գործում մեծ դեր է խաղացել։ Այս, վերջին հաշվով, քաղաքականության դերի հարցն է հասարակական արտադրության կազմակերպման գործում։

Մարքսիզմի կլասիկները մշտապես ժխտել են քաղաքականության և էկոնոմիկայի անջատման վուլգար մատերիալիստական թեզը։ Լենինը իր «Քաղաքականությունը և էկոնոմիկան պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ» աշխատության մեջ վճռական նշանակություն է տալիս քաղաքականությանը և այն բնորոշում է որպես էկոնոմիկայի խտացված արտահայտությունը։

Սոցիալիզմի ժամանակ քաղաքականության դերը անհամեմատ ավելի է բարձրանում, այն կազմում է սոցիալիստական հասարակության կազմակերպման կենսական ուժն ու պայմանը։ Սոցիալիստական արտադրահարաբերությունները որպես քաղաքականության մարմնացում լիակատար պայմաններ են ստեղծում երկրի արտադրողական ուժերի լայն զարգացման համար, նրանք քաղաքականությամբ չեն կաշկանդված, ինչպես այդ տեղի է ունենում կապիտալիստական հասարակարգում։

Եվ քանի որ Կոմունիստական պարտիան տնտեսական-քաղաքական կյանքի ղեկավարման իր քաղաքականությունը մշակելիս ելնում է սոցիալիստական արտադրողական ուժերի և արտադրահարաբերությունների անպայման համապատասխանության օրենքից, ուստի, դրանով իսկ այդ քաղաքականությունը ձեռք է բերում գիտական ու գործնական մեծ ուժ ու կարողություն։

* * *

Մյուս գլխավոր հարցը, որի վրա իր աշխատության մեջ մանրամասնորեն կանգ է առել ընկեր Ստալինը, այդ՝ ապրանքային արտադրության հարցն է սոցիալիզմի ժամանակ։

Սովետական որոշ տնտեսագետներ այն կարծիքն էին հայտնում, թե ճիշտ չէ ապրանքային արտադրության պահպանումը մեզանում. նրանք գտնում էին, որ երբ իշխանությունը գտնվում է պրոլետարիատի ձեռքին և արտադրության միջոցները ազգայնացված են, ապա ապրանքային արտադրությունը անմիջապես պետք է վերացվի, և ապրանքաշրջանառությունը փոխարինվի մթերափոխանակությամբ։ Այդ ասվում էր, ելնելով այն սխալ դիրքերից, թե ապրանքային արտադրությունը բոլոր դեպքերում, բոլոր պայմաններում անպայմանորեն տանում է դեպի կապիտալիզմ։

Իհարկե, այդ հիմնովին սխալ է։

Հասարակության պատմությունից հայտնի է, որ ապրանքային արտադրությունը և ապրանքափոխանակությունը գոյություն է ունեցել դեռևս ստրկատիրական հասարակարգում, այն սպասարկել է նրան, սակայն ապրանքային արտադրությունը ստրկատիրությունը չհասցրեց կապիտալիզմին։

Ապրանքային արտադրություն ուներ նաև ֆեոդալական հասարակությունը, չնայած նա որոշ պայմաններ նախապատրաստեց կապիտալիզմի համար, սակայն նույնպես չհասցրեց կապիտալիզմին։

Հետևաբար, հարց է ծագում, ինչու ապրանքային արտադրությունը անցյալում կարող էր սպասարկել նախակապիտալիստական դասակարգային հասարակարգերին, որոնք այս կամ այն չափով նախապայմաններ էին պատրաստում կապիտալիզմի համար և, այնուամենայնիվ, չհասցրեց կապիտալիզմին,

իսկ սոցիալիզմի ժամանակ ապրանքային արտադրությունը չի կարող ժամանակավորապես սպասարկել սոցիալիստական հասարակությանը և չհանգեցնել կապիտալիզմին, քանի որ ապրանքային արտադրությունը սոցիալիզմի ժամանակ տեղի ունի արտադրության միջոցների հանրային սոցիալիստական սեփականության բազայի վրա, վարձու աշխատանքի և շահագործման սիստեմների լիկվիդացման պայմաններում, և մանավանդ, որ շնորհիվ տնտեսությունն սոցիալիստական սիստեմի, այնպիսի սահմանափակ դրության մեջ է դրված, որ նրանում բնականաբար գոյություն ունենալ չէր կարող կապիտալիզմին նախորդող ոչ մի հասարակարգում։

Ապրանքային արտադրության հարցում գլխավոր սխալն այն է, որ որոշ ընկերներ նույնացնում են ապրանքային արտադրությունը կապիտալիստական արտադրության հետ։

«Չի կարելի ապրանքային արտադրությունը նույնացնել կապիտալիստական արտադրության հետ։ Դրանք երկու տարբեր բաներ են,— ասում է ընկեր Ստալինը։— Կապիտալիստական արտադրությունը ապրանքային արտադրության բարձրագույն ձևն է։ Ապրանքային արտադրությունը դեպի կապիտալիզմ է տանում միայն այն դեպքում, եթե գոյություն ունի արտադրության միջոցների մասնավոր սեփականություն, եթե աշխատուժը շուկա է դուրս գալիս որպես ապրանք, որը կապիտալիստը կարող է գնել և շահագործել արտադրության պրոցեսում, եթե, հետևաբար, երկրում գոյություն ունի կապիտալիստների կողմից վարձու բանվորների շահագործման սիստեմ։ Կապիտալիստական արտադրությունը սկսվում է այնտեղ, որտեղ արտադրության միջոցները կենտրոնացված են մասնավոր ձեռքերում, իսկ բանվորները, որոնք զուրկ են արտադրության միջոցներից, ստիպված են վաճառել իրենց աշխատուժը որպես ապրանք։ Առանց դրան չկա կապիտալիստական արտադրություն» (էջ 16)։

Մեր երկրում հաղթանակել է սոցիալիզմը, այդ նշանակում է՝ ոչնչացված են կապիտալիստական դասակարգերն ու կապիտալիստական հարաբերությունները, այդ նշանակում է, որ մեր երկրում ստեղծվել է մի այնպիսի հասարակություն, որտեղ գոյություն չունի արտադրության միջոցների մասնավոր սեփականություն, վարձու աշխատանք ու շահագործում։

Հետևաբար, սոցիալիստական հասարակարգում ապրանքային արտադրությունից կապիտալիզմի վերականգնում սպասելը ճիշտ չէ և արդյունք է սոցիալիստական հասարակարգի, կապիտալիզմի նկատմամբ անգերազանցելի բազմաթիվ առավելությունների ու դեպի կոմունիզմը տանող կենսական անսպառ ուժի թերագնահատման։

Ապրանքային արտադրության վերացման այսպես կոչված տեսության կողմնակիցները հիմնվում են Էնգելսի «Անտի-Դյուրինգ»-ում արտահայտված այն հայտնի մտքի վրա, թե «քանի որ հասարակությունը իր տրամադրության տակ կվերցնի արտադրության միջոցները, ապա կվերացվի ապրանքային արտադրությունը, իսկ դրա հետ միասին նաև արդյունքների տիրապետությունը արտադրողների վրա»։

Այդ ընկերները,— ասում է ընկեր Ստալինը,— խորապես սխալվում են, Էնգելսի ֆորմուլան չի կարելի լիովին պարզ և ճշգրիտ համարել։ Որովհետև Էնգելսի ֆորմուլայում չի ասված, թե խոսքը վերաբերում է արտադրության բոլոր միջոցների համաժողովրդական սեփականություն լինելուն, թե նրա մի մասին։

Եթե նա վերաբերում է արտադրության բոլոր միջոցներին, ապա մեզ մոտ այդպիսի դրություն հիմա գոյություն չունի։ Մեզ մոտ գոյություն ունի համաժողովրդական սոցիալիստական սեփականություն և խմբային-կոլեկտիվ սեփականություն, հետևաբար՝ սոցիալիստական հասարակարգի զարգացման ներկա էտապում, երբ խմբային-կոլտնտեսային սեփականության առկայության հետևանքով մեր պետությունը դեռևս լիովին չի տնօրինում երկրում արտադրվող բոլոր մթերքները, ապա սխալ կլիներ, և մեր քաղաքականության ընդգավառում մեծ վտանգ կառաջացներ էնգելսի ֆորմուլայի կիրառումը։

Հետևաբար, եթե մենք հանուն մթերափոխանակության գնայինք ապրանքային արտադրության անժամանակ վերացման ուղիով, էքսպրոպրիացիայի ենթարկեինք մանր ու միջին արտադրողներին գյուղում, հանրայնացնեինք նրանց արտադրության միջոցներն ու արտադրությունը, ապա այդ անմիտ, չմտածված ու վնասակար գործ կլիներ, այդ կնշանակեր միլիոնավոր մանր ու միջին արտադրողներին, հատկապես գյուղացիներին, երկար ժամանակով նետել պրոլետարիատի թշնամիների գիրկը։

Այդ հարցը Լենինը լուսաբանել է իր «Պարենհարկի մասին» աշխատություններում և հատկապես իր հռչակավոր «Կոոպերատիվ պլան»-ում։ Լենինյան այդ դրույթները զարգացնելով ընկեր Ստալինը, իր «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության մեջ շարադրել է այսպես.

«ա) բաց չթողնել իշխանությունը գրավելու համար բարենպաստ պայմանները, պրոլետարիատը պետք է գրավի իշխանությունը. չսպասելով մինչև այն մոմենտը, երբ կապիտալիզմը կկարողանա քայքայել մանր ու միջին անհատական արտադրողների բազմամիլիոն բնակչությունը.

բ) էքսպրոպրիացիայի ենթարկել արտադրության միջոցները արդյունաբերության մեջ և դրանք դարձնել համաժողովրդական սեփականություն.

գ) ինչ վերաբերում է մանր ու միջին անհատական արտադրողներին, ապա նրանց աստիճանաբար միավորել արտադրական կոոպերատիվներում, այսինքն՝ խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների մեջ.

դ) ամեն կերպ զարգացնել ինդուստրիան և կոլտնտեսությունները դնել խոշոր արտադրության ժամանակակից տեխնիկական բազայի վրա, ընդորում ոչ թե էքսպրոպրիացիայի ենթարկել, այլ, ընդհակառակը, ուժեղ թափով առաջնակարգ տրակտորներ և այլ մեքենաներ մատակարարել նրանց.

ե) իսկ բաղաքի և գյուղի, արդյունաբերության և գյուղատնտեսության տնտեսական զոդման համար մի որոշ ժամանակվա ընթացքում պահպանել ապրանքային արտադրությունը (փոխանակությունը առուծախի միջոցով) որպես բաղաքի հետ տնտեսական կապերի՝ գյուղացիների համար միակ ընդունելի ձևը, և յայնորեն ծավալել սովետական՝ պետական և կոոպերատիվ-կոլտնտեսային առևտուրը, ապրանքաշրջանառությունից դուրս մղելով բոլոր և ամեն տեսակ կապիտալիստներին» (էջ 15)։

Ինչպես տեսնում ենք, ապրանքային արտադրության և ապրանքաշրջանառության հարցը Լենինը դիտում է, որպես պրոլետարիատի և գյուղացիության տնտեսական ու բաղաքական դաշինքի ամրապնդման կարևորագույն հարց, որպես սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակի հարց։

Ապրանքային արտադրության հարցը ներկա շրջանում իր նշանակությամբ դուրս է գալիս միայն մեր երկրին վերաբերող հարց լինելու շրջանակ-

ներից և վերաբերում է նաև սոցիալիզմ կառուցող ժողովրդական դեմոկրատիայի երկրներին, այն վերաբերում է սոցիալիզմի և խաղաղության համար պայքարող արտասահմանյան եղբայրական կոմպարտիաների քաղաքականությանը մանր ու միջին արտադրողների, հատկապես գյուղացիության նկատմամբ։

Հենց այդ հանգամանքը նկատի ունենալով, ընկեր Ստալինը ասում է, որ «Տարակույս չի կարող լինել, որ մանր ու միջին արտադրողների քիչ թե շատ մեծաթիվ դասակարգ ունեցող բոլոր կապիտալիստական երկրների համար զարգացման այդ ուղին (խոսքը Լենինի մատնանշած ուղու մասին է — Ա. Մ.) միակ հնարավոր և նպատակահարմար ուղին է սոցիալիզմի հաղթանակի համար» (էջ 15)։

Իսկ ինչ վերաբերում է ներկայումս մեզ մոտ ապրանքային արտադրությունը վերացնելու հարցին, ապա այդ առաջին հերթին նշանակում է խմբային-կոլտնտեսային սեփականությունը բարձրացնել համաժողովրդական սեփականության մակարդակին և դրանով պայմաններ ստեղծել մթերափոխանակության անցնելու համար. բայց հայտնի բան է, որ այդ հարցը լուծել մեկ հարվածով անհնարին է, քանի որ դրա համար դեռևս անհրաժեշտ պայմաններ չեն ստեղծվել և, երկրորդ, «ներկայումս ապրանքային արտադրությունը և կոոպերատիվ-կոլտնտեսային սեփականությունը հաջողությամբ օգտագործվում են սոցիալիստական տնտեսության զարգացման համար և անվիճելի օգուտ են բերում մեր հասարակությանը, նրանք օգուտ կբերեն նաև մոտիկ ապագայում»,— ինչպես ասում է ընկեր Մալենկովը իր զեկուցման մեջ։ Հենց այդ նկատառումով էլ ապրանքային արտադրությունը, ինչպես և ապրանքաշրջանառությունը, քանի որ մեզ մոտ գոյություն ունեն սոցիալիստական սեփականության երկու ձևերը, օբեկտիվ անհրաժեշտություն են։

Հետևաբար, ապրանքային արտադրության վերացումը և ապրանքաշրջանառության փոխարինումը լիակատար մթերափոխանակությամբ հնարավոր է կատարել այն դեպքում միայն, երբ խմբային-կոլտնտեսային սեփականությունը կբարձրացվի համաժողովրդական սեփականության մակարդակին և համապատասխանորեն կստեղծվի աշխատանքի բարձր արտադրողականություն։

Այս հարցը վերջին հաշվով սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու նախապայմանների ստեղծման հարցն է։

Ընկեր Ստալինը իր «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության մեջ առաջ քաշեց և սպառիչ պատասխան տվեց սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու հիմնական նախապայմաններ ստեղծելու հարցին։

Որպեսզի նախապատրաստվի սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելը, սովորեցնում է ընկեր Ստալինը, պետք է իրագործել առնվազն երեք հիմնական նախնական պայման.

«1. Անհրաժեշտ է, նախ, հաստատուն կերպով ապահովել ոչ թե արտադրողական ուժերի մտացածին «ռացիոնալ կազմակերպումը», այլ ամբողջ հասարակական արտադրության անընդհատ աճումը՝ արտադրության միջոցների արտադրության առավել աճմամբ։ Արտադրության միջոցների արտադրության առավել աճումն անհրաժեշտ է ո՛չ միայն այն պատճառով, որ նա պետք է սարքավորումով ապահովի ինչպես իր սեփական ձեռնարկություն-

ները, այնպես էլ ժողովրդական տնտեսության մնացած բոլոր ճյուղերի ձեռնարկությունները, այլև այն պատճառով, որ առանց նրան առհասարակ անհնարին է ընդլայնված վերարտադրություն իրականացնելը։

2. Անհրաժեշտ է, երկրորդ, հօգուտ կոլտնտեսությունների, և, հետևապես, հօգուտ ամբողջ հասարակության իրականացվող աստիճանական անցումների միջոցով կոլտնտեսային սեփականությունը բարձրացնել համաժողովրդական սեփականության մակարդակին, իսկ ապրանքային շրջանառությունը նույնպես աստիճանական անցումների միջոցով փոխարինել մթերափոխանակության սիստեմով, որպեսզի կենտրոնական իշխանությունը կամ մի որևէ այլ հասարակական-տնտեսական կենտրոն կարողանա հասարակական արտադրության ամբողջ արտադրանքն ընդգրկել հօգուտ հասարակության։

...3. Անհրաժեշտ է, երրորդ, հասնել հառարակության այնպիսի կուլտուրական աճման, որը հասարակության բոլոր անդամների համար ապահովի նրանց ֆիզիկական ու մտավոր ընդունակությունների բազմակողմանի զարգացումը, որպեսզի հասարակության անդամները հնարավորություն ունենան ստանալու բավականաչափ կրթություն՝ հասարակական զարգացման ակտիվ գործիչներ դառնալու համար, որպեսզի նրանք հնարավորություն ունենան ազատորեն ընտրելու պրոֆեսիա և ոչ թե, աշխատանքի գոյություն ունեցող բաժանման հետևանքով, ամբողջ կյանքում գամված լինեն մեկ որևէ պրոֆեսիայի։

Ի՞նչ է պահանջվում դրա համար։

...Դրա համար հարկավոր է ամենից առաջ աշխատանքային օրը կրճատել՝ հասցնելով գոնե 6 ժամի, իսկ հետո էլ 5 ժամի։ Դա անհրաժեշտ է, որպեսզի հասարակության անդամները բավականաչափ ազատ ժամանակ ունենան, որ անհրաժեշտ է բազմակողմանի կրթություն ստանալու համար։ Դրա համար, այնուհետև, հարկավոր է մտցնել ընդհանուր-պարտադիր պոլիտեխնիկական կրթություն, որ անհրաժեշտ է, որպեսզի հասարակության անդամները հնարավորություն ունենան ազատորեն ընտրելու պրոֆեսիա և ամբողջ կյանքում գամված չլինեն որևէ մեկ պրոֆեսիայի։ Դրա համար, այնուհետև, հարկավոր է արմատապես բարելավել բնակարանային պայմանները և բանվորների ու ծառայողների ռեալ աշխատավարձը բարձրացնել առնվազն կրկնակի չափով, եթե ոչ ավելին, ինչպես դրամական աշխատավարձը ուղղակի բարձրացնելու միջոցով, այնպես էլ, հատկապես, մասսայական սպառման առարկաների գների հետագա սիստեմատիկ իջեցման միջոցով։

Սրանք են դեպի կոմունիզմ անցումն նախապատրաստելու հիմնական պայմանները» (էջ 72, 73, 74, 75)։

Այս բոլորից հետո ընկեր Ստալինը ամփոփում է, որ սոցիալիզմից կոմունիզմին անցնելու համար պահանջվող նախնական այս բոլոր պայմանները միասին վերցրած, կատարելուց հետո միայն կարելի է հույս ունենալ, որ աշխատանքը հասարակության անդամների աչքում ծանր պարտականությունից կվերածվի «առաջին կենսական պահանջի», ինչպես ասում է Մարքսը, որ «աշխատանքը ծանր բեռից կվերածվի բավականության», ինչպես ասում է Էնգելսը, որ հանրային սեփականությունը հասարակության բոլոր անդամների կողմից կգնահատվի որպես հասարակության գոյության անսասան և անձեռնմխելի հիմք։

Նախնական այս բոլոր պայմանները միասին վերցրած կատարելուց հետո, սովորեցնում է ընկեր Ստալինը, միայն հնարավոր կլինի «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» սոցիալիստական ֆորմուլայից անցնել «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ պահանջմունքի» կոմունիստական ֆորմուլային։

«Դա կլինի արմատական անցումն մի էկոնոմիկայից՝ սոցիալիզմի էկոնոմիկայից մյուս, ավելի բարձր էկոնոմիկային, կոմունիզմի էկոնոմիկային» (էջ 75)։

Ընկեր Ստալինը իր «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության մեջ քննության առնելով այն հարցը, թե սոցիալիստական հասարակարգում արժեքի օրենք գոյություն ունի՞ թե ոչ, գրում է. «Այո, գոյություն ունի և գործում է։ Այնտեղ, որտեղ կան ապրանքներ և ապրանքային արտադրություն, չի կարող չլինել նաև արժեքի օրենքը» (էջ 21)։ Այսպիսով՝ արժեքի օրենքի գոյությունը մեր սոցիալիստական տնտեսության մեջ պայմանավորված է ապրանքային արտադրության և ապրանքաշրջանառության հետ։

Սակայն արժեքի օրենքը մեր սոցիալիստական պլանային տնտեսության պայմաններում կարգավորիչի դեր չի խաղում, ինչպիսի դեր նա խաղում է կապիտալիստական հասարակության մեջ։

Արժեքի օրենքի գործողության ոլորտը մեզանում ամենից առաջ և նույնիսկ կարելի է ասել հիմնականում, պետական կոոպերատիվ առևտրի միջոցով տարածվում է անձնական սպառման ապրանքների փոխանակության վրա։ «Այստեղ, այս բնագավառում,— ասում է ընկեր Ստալինը,— արժեքի օրենքը, իհարկե, որոշ սահմաններում, պահպանում է կարգավորիչի իր դերը» (էջ 21)։

Արժեքի օրենքի գործողությունները սոցիալիզմի ժամանակ չեն սահմանափակվում միայն ապրանքային շրջանառության ոլորտով։ Արժեքի օրենքը տարածվում է նաև արտադրության բնագավառը։ «Բանն այն է,— ասում է ընկեր Ստալինը,— որ այն սպառողական արդյունքները, որոնք անհրաժեշտ են արտադրության պրոցեսում աշխատուժի ծախսումները ծածկելու համար, մեզանում արտադրվում և իրացվում են որպես արժեքի օրենքի ներգործությանը ենթակա ապրանքներ։ Հենց այստեղ էլ բացահայտվում է արժեքի օրենքի ներգործությունը արտադրության վրա» (էջ 21—22)։

Արժեքի օրենքը ներկա ժամանակաշրջանում սպասարկում է մեր տնտեսական կյանքը, այն արտադրության ղեկավարներին սովորեցնում է բոլոր միջոցներով արտադրության պրոցեսները կատարելագործել ու ռացիոնալիզացման ենթարկել, հայտնաբերել և լրիվ օգտագործել ռեզերվները— գործարանների արտադրողական կարողությունները, նյութական ու աշխատանքային միջոցները և այլն։ Նա սովորեցնում է պայքարել կորուստների ու վատնումների դեմ, պարտավորեցնում է բարձրացնել արտադրողականությունը և իջեցնել ինքնարժեքը։

Այս խնդիրների կատարումն ապահովելու համար է, որ մեր տնտեսության մեջ հատուկ նշանակություն են ստանում արտադրության կազմակերպման ու կատարման այնպիսի միջոցառումները, ինչպիսիք են՝ տնտեսական հաշվարկը, ինքնարժեքի ու գների իջեցման և ձեռնարկությունների եկամտաբերության հարցերը։

Այսպիսով, արտադրամիջոցների սոցիալիստական սեփականության, արտադրության սոցիալիստական-պլանային սիստեմի պայմաններում արժեքի

օրենքը իր խիստ սահմանափակված գործողությամբ ծառայում է արտադրության կառավարումը բարելավելու, նյութական ու աշխատանքային միջոցները նպատակահարմար օգտագործելու, արտադրության շահարերությունը բարձրացնելու և, վերջապես, սոցիալիստական կուտակումները ավելացնելու գործին։

Մեր սոցիալիստական տնտեսության մեջ արժեքի օրենքի խիստ սահմանափակ գործողության դերի պայմանների ու հետևանքների սխալ ըմբռնման հետևանքով, սոցիալիստական տնտեսության զարգացման ու կարգավորման օրենքների բուն էությունը չըմբռնելու հետևանքով, որոշ տնտեսագետներ այն սխալ եզրակացությանն են հանդում, թե արժեքի օրենքը սոցիալիստական տնտեսության մեջ կարգավորիչ օրենքի դեր է խաղում։

Իհարկե, այդ ճիշտ չէ։ Եթե այդպես լիներ, ապա մենք արդյունաբերության ու գյուղատնտեսության բնագավառում պետք է զարդացնեինք միայն այն ճյուղերը, որոնք այսօր մեծ օգուտ են բերում, ասենք թեթև արդյունաբերությունը և այլն, այնինչ սոցիալիստական արտադրության պրակտիկան ցույց է տալիս, որ մեզ մոտ զարգանում են նաև արտադրության այնպիսի ճյուղեր, որոնք քիչ և կամ առայժմ բոլորովին եկամուտ չեն բերում, բայց ընդհանրապես ժողովրդա-տնտեսական մեծ նշանակություն ունեն։

Սոցիալիստական արտադրության ինչպես առանձին ճյուղերի, այնպես էլ ամբողջությամբ վերցրած նրա զարգացման տեմպերի ու պրոպորցիաների հարցը, կարգավորվում ու լուծվում է սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի պահանջների հիման վրա, Սովետական Միության ժողովրդական տնտեսության պլանաչափ (պրոպորցիոնալ) զարգացման օրենքի միջոցով։

Այդ նշանակում է, որ սոցիալիստական տնտեսության զարգացման կարգավորիչ օրենքը պլանաչափ (պրոպորցիոնալ) զարգացման օրենքն է, և ոչ թե արժեքի օրենքը։

Այստեղից էլ պետք է անել այն հետևությունը, թե արժեքի օրենքը, պարտադիր կերպով պատմական զարգացման բոլոր ժամանակաշրջանների համար մշտական օրենք լինել չի կարող, և ընդհանրապես իրականության մեջ տնտեսական հավերժական օրենքներ գոյություն չունեն։ Ինչպես տնտեսական բոլոր օրենքները, այդ թվում և արժեքի օրենքը պատմական կատեգորիա են։ Կվերանա ապրանքային արտադրությունը, նրա հետ միաժամանակ կվերանա նաև արժեքի օրենքը, որպես նրան յուրահատուկ տնտեսական օրենք։

* *

Ընկեր Ստալինը իր հանճարեղ աշխատության մեջ գիտական խորը քննության և վերլուծման ենթարկեց ժամանակակից կապիտալիզմի և սոցիալիզմի տնտեսական հիմնական օրենքների հարցը։

Ժամանակակից կապիտալիզմը ճիշտ ուսումնասիրելու և ճանաչելու գործում թե՛ տնտեսական և թե՛ դասակարգային պայքարի շատ հարցերի գործնական ուղղությունը որոշելու տեսակետից կարևորագույն նշանակություն ունի նրա հիմնական տնտեսական օրենքի հայտնաբերումը և գիտական ճիշտ սահմանումը։

Մինչև ընկեր Ստալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության լույս տեսնելը, շատ ընկերներ այն կարծիքի էին, թե կապիտալիստական հասարակության տնտեսական հիմնական օրենքը ար-

ժեքի օրենքն է, կոնկուրենցիայի և արտադրության անարխիայի և կամ տարբեր երկրներում կապիտալիզմի անհամաչափ զարգացման օրենքն է, և այլն։

Այս բոլոր հարցերը, որոնք բնորոշում են կապիտալիստական արտադրաեղանակի առանձին կողմերը, կարող են լրիվ մեկնաբանվել կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքը ճիշտ սահմանելու դեպքում միայն։ Հետևաբար, ներկա շրջանում քաղաքատնտեսության հիմնական խնդիրներից մեկն էլ ժամանակակից կապիտալիզմի տնտեսական հիմնական օրենքը կապիտալիստական աշխարհի ճնշված ժողովուրդների առաջ լայնորեն մեկնաբանելու հարցն է։

Ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքի ճիշտ սահմանումը ունի քաղաքական ու տնտեսական մեծ նշանակություն, այն կօգնի բանվոր դասակարգին իր պայքարում ճիշտ կողմնորոշվելու համար, կօգնի գաղութային և կախյալ երկրների ժողովուրդներին՝ գաղութարարների այլանդակ դեմքը ճանաչելու և նրանց դեմ նպատակասլաց պայքար մղելու համար։

Ճիշտ չէ այն պնդումը, թե ժամանակակից կապիտալիզմի տնտեսական հիմնական օրենքը՝ արժեքի օրենքն է։ Պատմությունից հայտնի է, որ արժեքի օրենքը որպես ապրանքային արտադրության օրենք գոյություն է ունեցել մինչ-կապիտալիստական դասակարգային բոլոր հասարակարգերում։ Արժեքի օրենքը շարունակեց գոյություն ունենալ նաև կապիտալիզմի ժամանակ և մեծ դեր խաղաց նրա տնտեսական կյանքում։ Սակայն այն կապիտալիզմի տնտեսական հիմնական օրենք չդարձավ և չէր էլ կարող դառնալ։

Այդ նույն նկատառումներով չի կարող կապիտալիզմի տնտեսական հիմնական օրենք լինել կոնկուրենցիան, անարխիան, տարբեր երկրների անհամաչափ զարգացման օրենքը և այլն։

Շահույթի միջին նորմայի օրենքը ևս ժամանակակից կապիտալիզմի տնտեսական հիմնական օրենք լինել չի կարող, քանի որ ժամանակակից կապիտալիզմը, որ մոնոպոլիստական կապիտալիզմ է, չի կարող բավարարվել շահույթի միջին նորմայով, որը կապիտալի օրգանական կազմի բարձրանալու պատճառով անկման տենդենց ունի։

«Ժամանակակից մոնոպոլիստական կապիտալիզմը պահանջում է ոչ թե միջին շահույթ, այլ առավելագույն շահույթ, որն անհրաժեշտ է քիչ թե շատ կանոնավոր կերպով ընդլայնված վերարտադրություն իրականացնելու համար»,— ասում է ընկեր Ստալինը (էջ 41—42)։

Այդ նշանակում է, որ պայքարը առավելագույն շահույթի համար դարձել է ժամանակակից կապիտալիզմի— իմպերիալիզմի գոյության ամբողջ իմաստը։ Այդ նպատակն է հետապնդում ամերիկյան իմպերիալիզմի զավթողական պատերազմը Կորեայում, օկուպացիոն քաղաքականությունը Յապոնիայում, Արևմտյան Գերմանիայում, Մարշալլի պլանը Թյուրքիայում, Մերձավոր Արևելքի երկրներում, Ֆրանսիայում, Իտալիայում, Բենիլուքսի երկրներում և այլն։

Ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքի հասկացողությունը ամենից ավելի մոտ է հավելյալ արժեքի օրենքին, որպես բանվոր դասակարգի, գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների ամեն կերպ աճող շահագործումն արտահայտող օրենք։

Հետևաբար՝ ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքը առավելագույն շահույթ ապահովելու օրենքն է։

Ընկեր Ստալինը հայտնագործելով առավելագույն շահույթ ապահովելու կապիտալիստական հիմնական տնտեսական օրենքը, իր «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության մեջ նրա հիմնական գծերը բնորոշում է այսպես.

«Կապիտալիստական առավելագույն շահույթի ապահովում՝ տվյալ երկրի բնակչության մեծամասնության շահագործման, քայքայման ու աղքատացման միջոցով, ուրիշ երկրների, հատկապես հետամնաց երկրների ժողովուրդների ստրկացման ու սիստեմատիկ կողոպտման միջոցով, վերջապես, պատերազմների և ժողովրդական տնտեսության ռազմականացման միջոցով, որոնք օգտագործվում են ամենաբարձր շահույթներ ապահովելու համար» (էջ 42)։

Առավելագույն շահույթի օրենքի գործողության հետևանքով է, որ ամերիկյան մոնոպոլիստները 1941—1945 թվականների պատերազմի ընթացքում վաստակեցին ավելի քան 158 միլիարդ դոլլար։ 1951 թվականին միայն ամերիկյան մոնոպոլիստների եկամուտը հասավ 42,9 միլիարդ դոլլարի, որը 1938 թվականի համեմատությամբ աճել է ավելի քան 13 անգամ։

Առավելագույն շահույթի օրենքի գործողության հետևանքն է նաև այն փաստը, որ այսօր Ամերիկայի Միացյալ Նահանգների ազգային եկամուտի ավելի քան 60—70 տոկոսը յուրացնում են բնակչության չնչին փոքրամասնությունը կազմող, դայլի ախորժակ ունեցող մոնոպոլիստները, իսկ մնացած մասը բաժին է ընկնում բնակչության բացարձակ մեծամասնությանը։

Եվ, վերջապես, առավելագույն շահույթ ստանալու օրենքի գործողության արդյունքն է, որ կապիտալիստական երկրներում գնալով ընկնում է ռեալ աշխատավարձի մակարդակը, այն Ֆրանսիայում և Իտալիայում այսօր կազմում է նախապատերազմյան մակարդակի 50 տոկոսը, Անգլիայում 80 տոկոսը։ Այս երկրներում միաժամանակ աճում է գործազրկությունը։ Ամերիկյան մոնոպոլիստներին գերի դարձած Իտալիան ներկայումս ունի 2 միլիոն լրիվ գործազուրկ և դրանից էլ մի քիչ ավելի՝ կիսագործազուրկ, Արևմտյան Գերմանիան ունի 3 միլիոն, Յապոնիան մոտ 10 միլիոն գործազուրկ։ Ամերիկան ունի ավելի քան 3 միլիոն լրիվ գործազուրկ և 10 միլիոն կիսագործազուրկ. այնպիսի մի փոքր երկիր, ինչպիսին Բելգիան է, որը ընկել է Մարշալլի պլանի ցանցը, արդեն ունի ավելի քան 300 հազար գործազուրկ։

Այս բոլորը արդյունք են կապիտալիստական սիստեմի, գերշահույթի համար կապիտալիստական մոնոպոլիստների պայքարի, արտադրության հասարակական և յուրացման կապիտալիստական բնույթի միջև եղած խորը հակասությունների։

* * *

Մեծագույն տեսական ու գործնական նշանակություն ունի ընկեր Ստալինի կողմից սոցիալիզմի տնտեսական հիմնական օրենքի հայտնագործումը, նրա գիտական սահմանումը։

«Սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի էական գծերն ու պահանջները,— սովորեցնում է ընկեր Ստալինը,— կարելի էր ձևակերպել մոտավորապես այսպես. ամբողջ հասարակության նյութական և կուլտուրական հարատև պահանջմունքների առավելագույն բավարարման ապահովում՝ բարձրագույն տեխնիկայի բազայի վրա սոցիալիստական արտադրության անընդհատ աճման ու կատարելագործման միջոցով» (էջ 44)։

Սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի ստալինյան այս սահմանումը և նրա հակադրումը ժամանակակից կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքին, լիովին մերկացնում է ժամանակակից կապիտալիզմի ավազակային բնույթը, ցույց է տալիս, որ այնտեղ, կապիտալիստական աշխարհում, հիմնական տնտեսական օրենքի գործողության հետևանքով, թե՛ իր սեփական երկրում և թե՛ գաղութային ու կախյալ երկրներում աշխատավորական լայն մասսաները գնում են դեպի տնտեսական քայքայում, աղքատացում և, ընդհակառակը, սոցիալիզմի երկրում՝ սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի գործողության հետևանքով, օրեց-օր բարձրանում է աշխատավորների նյութական բարեկեցությունն ու կուլտուր-կենցաղային մակարդակը։

Սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի գործողության արդյունքները լիակատար կերպով դրսևորում են սոցիալիստական արտադրանքի անհամատեղելի առավելությունը կապիտալիստական արտադրանքի նկատմամբ, որը վառ կերպով, աճող թվերի համառ փաստերով ցուցադրեց ընկեր Մալենկովը Պարտիայի 19-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ։

1951 թվականին, 1929 թվականի համեմատությամբ Սովետական Միության արդյունաբերության համախառն արտադրանքը աճել է 13 անգամ, այն դեպքում, երբ կապիտալիստական աշխարհը կամ հետ է գնում, կամ դոփում է տեղում և կամ սպառազինման ու պատերազմների միջոցով ընդմիջումներով ժամանակավորապես առաջ է գնում։

Որ սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի գործողության հետևանքով օրեցօր բարձրանում է Սովետական Միության ժողովուրդների նյութական բարեկեցությունն ու կուլտուրական մակարդակը, ցույց է տալիս այն փաստը, որ 1951 թվականին 1940 թվականի համեմատությամբ Սովետական Միության ազգային եկամուտը ավելացել է 83 տոկոսով, որի ավելի քան 75 տոկոսը ստանում են աշխատավորներն իրենց անձնական սպառման համար, իսկ մնացած մասը մնում է սովետական պետության տրամադրության տակ՝ սոցիալիստական արտադրության ընդլայնման և համապետական ու հասարակական այլ կարիքների համար։

Բանվորների և ծառայողների աշխատավարձի աճի, կոլտնտեսականների եկամուտների ավելացման, մասսայական սպառման ապրանքների գների սիստեմատիկ իջեցման և պետության հաշվին բնակչությանը տրվող զանազան վճարումների աճի շնորհիվ, բանվոր-ծառայողների մեկ աշխատողին ընկնող ռեալ եկամուտը 1951 թվականին 1940 թվականի համեմատությամբ ավելացել է մոտավորապես 57 տոկոսով, իսկ կոլտնտեսականների եկամուտը մեկ աշխատողի նկատմամբ ավելացել է 60 տոկոսով։

Միայն հետպատերազմյան տարիների ընթացքում քաղաքներում աշխատավորների համար սոցիալիստական պետության միջոցների հաշվին կառուցվել է ավելի քան 155 միլիոն քառակուսի մետր բնակարան, իսկ գյուղական վայրերում՝ ավելի քան 3,8 միլիոն բնակելի տուն։

Լուսավորության համար կատարվող ծախսերը 1940 թվականի 22,5 միլիարդ ռուբլուց ավելացել և 1951 թվականին հասել է 57,3 միլիարդ ռուբլու, կամ աճել է 2,5 անգամ։ Միայն հետպատերազմյան տարիներին կառուցվել է 23.500 դպրոց։ Սովորողների ընդհանուր թիվը մեր երկրում կազմում է 37

միլիոն մարդ, կամ մոտավորապես 5 անգամ ավելի, քան Ամերիկայում սովորողների թիվը։ Եթե սովորողների թիվը համեմատում ենք բնակչության ընդհանուր թվի հետ, ապա մեզ մոտ՝ Սովետական Միության մեջ սովորում է, բնակչության 26—27 տոկոսը, իսկ Ամերիկայում՝ ոչ ավելի, քան 8 տոկոսը, Թյուրքիայում մոտավորապես 4 տոկոսը, որտեղ ընդամենը 35 հազար դյուղերից 25—26 հազարը դպրոց չունեն։

Բնակչության նյութական բարեկեցության բարձրացման ու կուլտուրական աճի հետևանքով ներկայումս Սովետական Միության մեջ զգալիորեն կրճատվել են մահացությունները։ Միայն վերջին երեք տարիների ընթացքում մեր բնակչության աճը կազմում է 9,5 միլիոն մարդ։

Ելնելով սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի իրականացման պահանջներից, կարտիան սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը առաջ է մղում անշեղ վերելքի ուղիով, որը վառ կերպով արտահայտվել է ինչպես ստալինյան նախորդ չորս հնգամյակների իրագործման ժամանակ, այնպես էլ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի 19-րդ համագումարի կողմից հաստատված հինգերորդ հնգամյա պլանի դիրեկտիվներում, որտեղ ասված է.

«Սոցիալիստական արտադրության անընդհատ աճի և հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման հիման վրա, ՍՍՌՄ-ի ազգային եկամուտը ավելացնել 60 տոկոսով և այդ կապակցությամբ ապահովել բանվորների ու ծառայողների եկամուտների և գյուղացիների եկամուտների հետագա աճը»։

Դրա հիման վրա նախատեսվում է բանվոր-ծառայողների ռեալ աշխատավարձը հինգերորդ հնգամյակի ընթացքում 1950 թվականի համեմատությամբ բարձրացնել 35 տոկոսով, կոլտնտեսականների դրամական ու նատուրալ եկամուտները (դրամական արտահայտությամբ) առնվազն 40 տոկոսով։

Այս խնդիրների իրականացման համար 1951—1955 թվականների ընթացքում նախատեսվում է արդյունաբերության համախառն արտադրանքը 1950 թվականի համեմատությամբ ավելացնել 70 տոկոսով, գյուղատնտեսության բնագավառում՝ հացահատիկների արտադրանքը ավելացնել 40—50 տոկոսով, բամբակի հումքի արտադրությունը՝ 55—65 տոկոսով, վուշաթելինը՝ 40—50 տոկոսով, շաքարի ճակնդեղինը՝ 65—70 տոկոսով, կարտոֆիլինը՝ 40—45 տոկոսով, արևածաղկինը՝ 50—60 տոկոսով, խաղողինը՝ 55—60 տոկոսով, ծխախոտինը՝ 65—70 տոկոսով և այլն։

Անասնապահության մթերքների քանակը ավելացնել՝ մսի և ճարպինը՝ 80—90 տոկոսով, կաթինը՝ 45—50 տոկոսով, բրդինը՝ մոտավորապես 2—2,5 անգամ, ձվինը՝ 6—7 անգամ։

Հինգերորդ հնգամյա պլանով նախատեսված խնդիրների կատարումը խոշոր առաջընթաց թույլ կհանդիսանա սովետական ժողովրդի նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի բարձրացման գործում, սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու ճանապարհին։

* * *

Ընկեր Ստալինը իր «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության մեջ գիտական խորը վերլուծման ու լուսաբանման ենթարկեց քաղաքի ու գյուղի միջև, արդյունաբերության և գյուղատնտեսության միջև

եղած հակադրությունների ոչնչացման պրոբլեմը, դիտական նոր ավանդ մացրեց մարքս-լենինյան տեսության գանձարանը։

Հայտնի է, որ գյուղի և քաղաքի միջև եղած հակադրությունների հիմքը մեղ մոտ, անցյալում եղել է քաղաքի, այսինքն կապիտալիստական արդյունաբերության— առևտրի, վարկային սիստեմի միջոցով գյուղացիության էքսպրոպրիացիան, գյուղական բնակչության մեծամասնության աղքատացումն ու քայքայումը։

Անցյալում քաղաքը պարզապես շահագործում էր գյուղին, դրա համար էլ ընկեր Ստալինը ասում է, որ «կապիտալիզմի ժամանակ քաղաքի և գյուղի միջև եղած հակադրությունը պետք է դիտել որպես շահերի հակադրություն» (էջ 28)։

Մեր երկրում սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակից հետո, սոցիալիստական հասարակարգի ամրապնդման ընթացքում, բանվոր դասակարգի կողմից գյուղացիությանը ցույց տրված սիստեմատիկ նյութական-կազմակերպական օգնության շնորհիվ, լիովին վերացավ շահերի հակադրությունը քաղաքի և գյուղի միջև, արդյունաբերության և գյուղատնտեսության միջև։

Երկրի սոցիալիստական ինդուստրացման ու կոլտնտեսային կարգերի հաղթանակի հիման վրա, երբ հնարավոր դարձավ սոցիալիստական գյուղատնտեսությունը մասսայարար վերազինել առաջավոր մեքենաներով՝ տրակտորներով, կոմբայններով ու հարյուրավոր բարդ մեքենաների նորանոր տեսակներով, այդ հակադրությունների հետքերն անգամ չմնացին։

Չնայած այն բանին, որ բանվոր դասակարգը և կոլտնտեսական գյուղացիությունը իրենց դրությամբ երկու տարբեր դասակարգեր են, բայց այդ տարբերությունը ամենևին չի թուլացնում նրանց միությունը, այլ, ընդհակառակը, դնալով ամրապնդվում է նրանց միջև բարեկամությունն ու դաշինքը, գործողությունների միասնությունը, որովհետև նրանք երկուսն էլ, թե՛ բանվոր դասակարգը և թե՛ կոլտնտեսային գյուղացիությունը գործում են հիմքով նույնատիպ սոցիալիստական սեփականության բազայի վրա, կոմունիստական պարտիայի առաջնորդությամբ, բանվոր դասակարգի հետ միասին ավարտելով սոցիալիզմի կառուցումը, գնում են դեպի կոմունիզմ։

«Այս ամենը,— ասում է ընկեր Ստալինը,— նշանակում է, որ մեր այժմյան սոցիալիստական հասարակարգը արդեն վերացրել է քաղաքի և գյուղի, արդյունաբերության և գյուղատնտեսության միջև հակադրության հողը» (էջ 28)։

Միաժամանակ ընկեր Ստալինը զգուշացնում է, որ այս բոլորից չպետք է անել այն եզրակացությունը, թե քաղաքի և գյուղի միջև եղած հակադրությունների վերացումը աստիճանաբար պիտի տանեն դեպի խոշոր քաղաքների ոչնչացումը։

Ընկեր Ստալինը գրում է. «Մեծ քաղաքները ո՛չ միայն չեն կործանվի, այլև դեռ երևան կգան նոր մեծ քաղաքներ, որպես կուլտուրայի առավել աճման կենտրոններ, որպես ո՛չ միայն մեծ ինդուստրիայի, այլև գյուղատնտեսական մթերքների վերամշակման և սննդի արդյունաբերության բոլոր ճյուղերի հզոր զարգացման կենտրոններ։ Այդ հանգամանքը կհեշտացնի երկրի կուլտուրական ծաղկումը և կհասցնի կենցաղի պայմանների հավասարմանը քաղաքում և գյուղում» (էջ 29)։

Ինչպես տեսնում ենք, ընկեր Ստալինը քաղաքի և գյուղի հակադրությունների վերացման պայմաններում խոշոր քաղաքների տնտեսական, կուլտուրական ծաղկումը դիտում է որպես քաղաքի և գյուղի միջև կենցաղային պայմանների հավասարեցման միջոց։

Եվ, իսկապես, մեր հին ու փոքր քաղաքների ու հատկապես գյուղերի կողքին սոցիալիստական նոր քաղաքների առաջ գալը, ինչպիսիք են՝ Մագնիտոգորսկը, Կոմսոմոլսկը և մյուսները, մեր հին քաղաքներում արդյունաբերական, կուլտուրական շինարարության ծավալումը լիովին արդարացնում են ստալինյան այն թեզը, թե նոր ու խոշոր քաղաքների առաջ գալը, նրանցում արդյունաբերական ու կուլտուրայի ծաղկումը կնպաստի գյուղի ու քաղաքի կուլտուր-կենցաղային պայմանների հավասարեցմանը։

Նույնպիսին է մեզանում մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած հակադրության ոչնչացման պրոբլեմը։ Քանի որ այդ պրոբլեմի տնտեսական հիմքն անցյալում հանդիսացել է ֆիզիկական աշխատանք կատարող մարդկանց շահագործվելը մտավոր աշխատանքի ներկայացուցիչների կողմից, ապա պարզ է, որ մեզ մոտ մարդու շահագործումը մարդու կողմից ամբողջապես ոչնչացնելու հետևանքով ոչնչացան նաև հակադրությունները ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև։

«Այժմ ֆիզիկական աշխատանք կատարող մարդիկ և ղեկավարող անձնակազմը ո՛չ թե թշնամիներ են, այլ մտերիմ ընկերներ, մի միասնական արտադրական կոլեկտիվի անդամներ, որոնք խորապես շահագրգռված են արտադրության առաջադիմության ու բարելավման գործում։ Նրանց միջև եղած երբեմնի թշնամության հետքն անդամ չի մնացել» (էջ 29)։

Ընկեր Ստալինը մարքսիստական գրականության մեջ առաջին անդամ առաջ քաշեց քաղաքի և գյուղի միջև, ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև եղած տարբերությունների վերացման հարցը։

Այս հարցում պետք է տարբերել երկու հասկացողություն— հակադրություններ քաղաքի և գյուղի միջև, որը մեզ մոտ ոչնչացավ սոցիալիզմի հաղթանակի— արտադրամիջոցների մասնավոր սեփականության ու շահագործման ոչնչացման պատճառով, և քաղաքի ու գյուղի միջև դեռևս գոյություն ունեցող էական տարբերությունները, որոնք բխում են ոչ միայն արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ աշխատանքի պայմանների տարբերությունից, այլև հիմնականում նրանից, որ արդյունաբերության մեջ մենք ունենք արտադրության միջոցների և արտադրության արդյունքների համաժողովրդական սեփականություն, իսկ գյուղատնտեսության մեջ ունենք ոչ թե համաժողովրդական, այլ խմբային-կոլտնտեսային սեփականություն։

Այս պրոբլեմը՝ սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ճանապարհին, մեզ համար կարևորագույն նշանակություն ունեցող պրոբլեմներից մեկն է։

Նույնը պիտի ասել մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերության մասին։

Այն դեպքում, երբ մեզ հաջողվի բանվորներին բարձրացնել ինժեներա-տեխնիկական, իսկ կոլտնտեսականներին ագրոտեխնիկական կազմի կուլտուրական-տեխնիկական մակարդակին, ապա, անկասկած, կվերանա այդ էական տարբերությունը ևս։

Անցյալում, ինչպես քաղաքատնտեսական գրականության մեջ, այնպես էլ նոյեմբերյան դիսկուսիայի ժամանակ, որոշ ընկերներ պնդում էին այն թե-

զը, թե ժամանակի ընթացքում կանհետանան բոլոր տեսակի տարբերություններն արդյունաբերության ու գյուղատնտեսության, ֆիզիկական ու մտավոր աշխատանքի միջև։

«Դա ճիշտ չէ,— ասում է ընկեր Ստալինը։— Արդյունաբերության և գյուղատնտեսության միջև եղած էական տարբերության ոչնչացումը չի կարող հասցնել նրանց միջև եղած ամեն մի տարբերության ոչնչացմանը։ Մի ինչ-որ տարբերություն, թեպետև ոչ-էական, անպայմանորեն կմնա արդյունաբերության և գյուղատնտեսության աշխատանքի պայմաններում եղած տարբերությունների պատճառով» (էջ 31)։

* * *

Ընկեր Ստալինը իր «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության մեջ հանգամանորեն քննության է առել սոցիալիզմից կոմունիզմին անցնելը նախապատրաստելու համար՝ կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու կարևորագույն հարցը։

Ընկեր Ստալինը իր հանճարեղ աշխատության մեջ քննության առնելով այս հարցը, նախ և առաջ սովորեցնում է, թե ինչպես պետք է հասկանալ խմբային-կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու հարցը, թե ինչ սկզբունքով ու արտադրա-կազմակերպական ինչպիսի միջոցառումների ձևով պետք է լուծել այդ հարցը։

Որոշ ընկերներ գտնում էին, որ խմբային-կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու հարցը պետք է լուծել մեքենա-տրակտորային կայանների արտադրամիջոցները կոլտնտեսություններին հանձնելու և նրանց՝ կոլտնտեսություններին այդ միջոցների պահպանության ու օգտագործման համար պատասխանատու դարձնելու միջոցով։

Կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու այս ուղին հիմնովին սխալ և վնասակար ուղի է, որովհետև դրանով մենք կոլտնտեսային արտադրությունը կդրկենք բարձր տեմպերով աճելու իր աղբյուրից։ Իսկ այդ աղբյուրը, ինչպես հայտնի է, պետական միջոցների հաշվին, պետության ձեռքում կենտրոնացած գյուղատնտեսական առաջավոր տեխնիկան է։

Սակայն պետք է ասել, որ բանը ոչ միայն եղած տեխնիկայի մեջ է, այլ այն, որ այդ տեխնիկան չի կարող նույն տեղում կանգնած մնալ, նա սիստեմատիկաբար կատարելագործվում է, փոփոխվում, հինը փոխարինվում է նորով, առանց որի անհնարին է մեր գյուղատնտեսության և ընդհանրապես սոցիալիստական տնտեսության առաջընթացը։

Բնական է, որ այդ բոլորը կապված են մեծաքանակ կապիտալ ներդրումների հետ, իսկ մեր կոլտնտեսությունները որքան էլ ունևոր լինեն, այնուամենայնիվ չեն կարող դիմանալ ու հոգալ այդ մեծ ծախսերը։

«Այս բոլորից հետո,—հարցնում է ընկեր Ստալինը,—ի՞նչ է նշանակում պահանջել, որ ՄՏԿ-ները կոլտնտեսություններին վաճառվեն որպես սեփականություն։ Դա նշանակում է մեծ վնասների տակ գցել և քայքայել կոլտնտեսու-

թյունները, վիժեցնել գյուղատնտեսության մեքենայացումը, իջեցնել կոլտնտեսային արտադրության տեմպերը» (էջ 98)։

Մյուս կողմից՝ այդ միջոցով կոլտնտեսային սեփականությունը ոչ թե կբարձրացվի համաժողովրդական սեփականության մակարդակին, այլ կհեռացվի նրանից, որովհետև դրանով կոլտնտեսությունը կգտնա հիմնական արտադրամիջոցների սեփականատեր։

Այնուհետև, հայտնի է նաև այն փաստը, որ արտադրության միջոցները մեզ մոտ ապրանք չեն և դուրս են ապրանքաշրջանառությունից, հետևաբար մեքենա-տրակտորային կայանները կոլտնտեսություններին վաճառելը նշանակում է ընդարձակել ապրանքային արտադրությունը, որը ոչ միայն չի նպաստի, այլ, ընդհակառակը, կարգելակի մեր առաջխաղացմանը դեպի կոմունիզմ։

Այսպիսով, ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ մեքենա-տրակտորային կայանները կոլտնտեսություններին վաճառելը չի կարող լուծել կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու հարցը, այլ ընդհակառակը, մեծ վնաս կբերի, ինչպես կոլտնտեսություններին, այնպես էլ ամբողջ հասարակությանը։

Որոշ ընկերներ էլ այն կարծիքին էին, թե խմբային-կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու համար կոլտնտեսային սեփականությունը պետք է հանձնել պետությանը։

Իհարկե, այս տեսակետը ևս հիմնովին սխալ է։

«Այդ ընկերները կարծում են,— ասում է ընկեր Ստալինը,— թե առանձին անձերի և խմբերի սեփականությունը պետությանը որպես սեփականություն հանձնելը ազգայնացման միակ կամ հավանայն դեպս լավագույն ձևն է։ Այդ ճիշտ չէ» (էջ 94)։

Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ առանձին անձանց և խմբերի սեփականությունը պետությանը որպես սեփականություն հանձնելը, այդ ազգայնացման ամենից ավելի հասկանալի և նախնական ձևն է։ Այդ, ինչպես հայտնի է, մեզ մոտ արվեց սոցիալիստական ռևոլուցիայի առաջին օրերին, հասարակական առանձին շահագործող դասակարգերի ու շերտերի նկատմամբ։ Հետևաբար, այդ ներկա պայմաններում, կոլտնտեսային սեփականության նկատմամբ, որը ըստ էության սոցիալիստական սեփականություն է, ընդունելի չէ։

Բանն այն է, որ կոլտնտեսության հիմնական արտադրամիջոցներն արդեն համաժողովրդական սեփականություն են։ Այսպես, օրինակ, այն հողը, որի վրա աշխատում ու մշակում է կոլտնտեսությունը, կոլտնտեսային սեփականություն չէ, այլ համաժողովրդական սեփականություն, հետևաբար հողը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու հարցը վերանում է։

Այնուհետև, այն հիմնական մեքենաներն ու գործիքները, որոնց անմիջական աշխատանքով կոլտնտեսությունը կազմակերպում է իր արտադրությունը, ինչպես հայտնի է, մեքենա-տրակտորային կայանների մեքենաներն ու գործիքներն են, որոնք նույնպես համաժողովրդական սեփականություն են կազմում։

«Կոլտնտեսությունը,— ասում է ընկեր Ստալինը,— աշխատում է ոչ թե կոլտնտեսային, այլ համաժողովրդական սեփականություն ներկայացնող արտադրության հիմնական գործիքների օգնությամբ։ Հետևապես, կոլտնտեսությունը արտադրության հիմնական գործիքների սեփականատերը չէ» (էջ 100)։

Ապա հարց է ծագում, կոլտնտեսային ո՞ր սեփականության մասին է խոսքը, որը պետք է բարձրացվի համաժողովրդական սեփականության մակարդակին։

«Այդպիսի սեփականություն է,— ասում է ընկեր Ստալինը,— կոլտնտեսության արտադրանքը, կոլտնտեսային արտադրության արտադրանքը՝ հացահատիկը, միսը, յուղը, բանջարեղենը, բամբակը, ճակնդեղը, վուշը և այլն, չհաշված շինությունները և կոլտնտեսականների տնամերձ անձնական տնտեսությունները։ Բանն այն է, որ այդ արտադրանքի նշանակալի մասը, կոլտնտեսային արտադրության ավելցուկները մտնում են շուկա և այսպիսով ներառվում են ապրանքային շրջանառության սիստեմում։ Հենց այդ հանգամանքն է, որ այժմ խանգարում է կոլտնտեսային սեփականության բարձրացմանը համաժողովրդական սեփականության մակարդակին։ Ուստի հենց այս ծայրից էլ հարկավոր է ծավալել կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդականի մակարդակին բարձրացնելու աշխատանքը» (էջ 101)։

Այդ նշանակում է, որ կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու համար պետք է կոլտնտեսային արտադրության ավելցուկները աստիճանաբար հանել ապրանքաշրջանառության սիստեմից և մտցնել պետական արդյունաբերության ու կոլտնտեսությունների միջև մթերափոխանակության սիստեմը, որի սաղմերը մեզ մոտ արդեն զարգանում են հանձինս գյուղատնտեսական մի շարք մթերքների, հատկապես տեխնիկական կուլտուրաների հումքի, «ապրանքավորման» հացով ու արդյունաբերական ապրանքներով։

Սակայն, զգուշացնում է ընկեր Ստալինը, որ այդ պետք է արվի առանց շտապողականության, քաղաքի արտադրանքների կուտակման համեմատ, «բայլ առ բայլ կրճատելով ապրանքային շրջանառության գործողության ոլորտը և ընդլայնելով մթերափոխանակության գործողության ոլորտը։

Այդպիսի սիստեմը, կրճատելով ապրանքային շրջանառության գործողության ոլորտը, կհեշտացնի անցումը սոցիալիզմից կոմունիզմին։ Բացի դրանից, նա հնարավորություն կտա կոլտնտեսությունների հիմնական սեփականությունը՝ կոլտնտեսային արտադրության արտադրանքը մտցնել համաժողովրդական պլանավորման ընդհանուր սիստեմի մեջ։

Հենց դա էլ կլինի կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու ռեալ ու վճռական միջոցը մեր ժամանակակից պայմաններում» (էջ 102)։

Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք ձեռնտու կլինի՞ մեր կոլտնտեսությունների համար աստիճանաբար հանել իր արտադրանքի ավելցուկները ապրանքաշրջանառությունից և մտցնել մթերափոխանակության սիստեմը, ընկեր Ստալինը ասում է՝ այո «Անպայման ձեռնտու է։ Ձեռնտու է, որովհետև կոլտնտեսային գյուղացիությունը պետությունից կստանա շատ ավելի արտադրանք և ավելի էժան գներով, քան ապրանքային շրջանառության դեպքում։ Բոլորին հայտնի է, որ այն կոլտնտեսությունները, որոնք կառավարության-

հետ մթերափոխանակության պայմանագրեր ունեն («ապրանքավորում»), անհամեմատ ավելի շատ օգուտ են ստանում, քան այդպիսի պայմանագրեր չունեցող կոլտնտեսությունները» (էջ 102)։

* * *

«Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» իր աշխատության մեջ ընկեր Ստալինը տվել է նաև համաշխարհային կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի բնույթը և զարգացման էտապները։

Մինչև ընկեր Ստալինի պատասխանը պրոֆեսոր Նոտկինին, տնտեսագետները վիճում էին այն մասին, թե առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի ճգնաժամը գա կապիտալիստական ընդհանուր տնտեսական ճգնաժամն է, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում ծավալված ճգնաժամը— համաշխարհային կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամն է։ Իհարկե այսպիսի հարցադրումը ճիշտ չէր։

Պատասխանելով այս հարցերին, ընկեր Ստալինը ասում է. «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի առաջին ճգնաժամը և երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի երկրորդ ճգնաժամը պետք է դիտել ո՛չ որպես առանձին, մեկը մյուսից կտրված ինքնուրույն ճգնաժամեր, այլ որպես համաշխարհային կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի զարգացման էտապներ» (էջ 61)։

Այդ նշանակում է, որ գոյություն ունի մեկ ընդհանուր ճգնաժամ՝ իր հայտնի երկու էտապներով։

Այնուհետև ընկեր Ստալինը պարզաբանում է, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կապիտալիստական սիստեմից Սովետական Միության անջատվելը առաջացրեց ընդհանուր ճգնաժամի առաջին էտապը, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում ժողովրդական դեմոկրատիայի երկրների ու Չինաստանի անջատումը կապիտալիստական սիստեմից առաջացրեց ու ծավալեց ընդհանուր ճգնաժամի երկրորդ էտապը։

Տարաձայնություն կար նաև այն հարցի շուրջը, թե արդյոք համաշխարհային կապիտալիստական ընդհանուր ճգնաժամը միայն քաղաքական ճգնաժամ է, թե՞ միայն տնտեսական։

Պարզ է, որ այդպիսի հարցադրումը ևս ճիշտ լինել չէր կարող։ Մարքսիստները երբեք չեն անջատել էկոնոմիկան քաղաքականությունից և հակառակը՝ քաղաքականությունը էկոնոմիկայից, որովհետև նրանք մեկը մյուսով խիստ պայմանավորված են։

Ինչպես տեսնում եք, այս հարցում ևս երևան է գալիս էկոնոմիկայի ու քաղաքականության անջատման հակամարքսիստական կոնցեպցիան։

Ընկեր Ստալինը այդ մասին սովորեցնում է. «Ո՛չ այս, ո՛չ այն։ Նա ընդհանուր է, այսինքն՝ կապիտալիզմի համաշխարհային սիստեմի համակողմանի ճգնաժամ է, որն ընդգրկում է ինչպես էկոնոմիկան, այնպես էլ քաղաքականությունը։ Ընդ որում հասկանալի է, որ այդ ճգնաժամի հիմքում ընկած է, մի կողմից՝ կապիտալիզմի համաշխարհային տնտեսական սիստեմի ավելի ու ավելի ուժեղացող քայքայումը և, մյուս կողմից՝ կապիտալիզմից անջատված

երկրների՝ ՍՍՌՄ-ի, Չինաստանի և մյուս ժողովրդա-դեմոկրատական երկրների աճող տնտեսական հզորությունը» (էջ 62)։

Համաշխարհային երկրորդ պատերազմի հետևանքով աշխարհը բաժանվեց երկու միմյանց հակադիր լագերի՝ կապիտալիզմի լագերի՝ ամերիկյան ու անգլիական մոնոպոլիստների գլխավորությամբ, և սոցիալիզմի լագերի՝ Սովետական Միության գլխավորությամբ։ Միմյանց հակադիր այս երկու լագերների կազմվելը հանգեցրեց այն բանին, որ համաշխարհային միասնական, համապարփակ շուկան տրոհվեց երկու զուգահեռ և միմյանց հակադիր համաշխարհային շուկաների։

Բանն այն է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Անգլիան ու Ֆրանսիան օբեկտիվորեն, իրենց կամքից անկախ, Սովետական Միության, Չինաստանի ու ժողովրդա-դեմոկրատական երկրների տնտեսական բլոկադայի բալաքականությամբ, նպաստեցին համաշխարհային կապիտալիստական միասնական շուկայի տրոհմանը՝ երկու հակադիր շուկաների։

Ամերիկյան ավազակային իմպերիալիզմի գլխավորությամբ կապիտալիստական ոհմակի հաշիվները սխալ դուրս եկան՝ «Մարշալլի պլան»-ի ստրկական ցանցի մեջ չմտած Սովետական Միության, Չինաստանի, ժողովրդա-դեմոկրատական երկրների տնտեսական բլոկադայի միջոցով խեղդամահ անելու մասին։

Բայց պետք է նկատի ունենալ, որ հիմնականը տնտեսական բլոկադայի հարցը չէր, այլ այն, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Սովետական Միության և նոր առաջացած ժողովրդա-դեմոկրատական երկրների ու Չինաստանի միջև առաջացավ իրական, անկեղծ կերպով միմյանց տնտեսապես, տեխնիկապես սիստեմատիկաբար օգնելու ցանկություն ու անհրաժեշտություն, որը բնականաբար չէին ցանկանա և չէին էլ կարող տնել կապիտալիստական երկրները։

«Այդ համագործակցության փորձը ցույց է տալիս,— ասում է ընկեր Ստալինը,— որ ոչ մի կապիտալիստական երկիր չէր կարող այնպիսի իրական և տեխնիկապես որակյալ օգնություն ցույց տալ ժողովրդա-դեմոկրատական երկրներին, որպիսին նրանց ցույց է տալիս Սովետական Միությունը։ Բանը ոչ միայն այն է, որ այդ օգնությունը առավել էժան և տեխնիկապես առաջնակարգ օգնություն է։ Բանն ամենից առաջ այն է, որ այդ համագործակցության հիմքում դրված է մեկը մյուսին օգնելու և ընդհանուր տնտեսական վերելք ձեռք բերելու անկեղծ ցանկությունը» (էջ 34)։

Համաշխարհային կապիտալիստական միասնական շուկայի տրոհումը երկու շուկաների, անպայմանորեն կրճատեց հումքի համաշխարհային ռեսուրսների կապիտալիստական երկրների բաժինը, կրճատեց կապիտալիստական վաճառահանման շուկաները, որի հետևանքով բնականաբար պետք է ավելանա կապիտալիստական ձեռնարկությունների թերբեռնվածությունը։ Այս բոլորը օբեկտիվորեն, կապիտալիստների կամքից անկախ, տանում են դեպի կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի խորացումը։

«Այդ բանը զգում են իրենք՝ կապիտալիստները,— ասում է ընկեր Ստալինը,— որովհետև դժվար է չզգալ այնպիսի շուկաների կորուստը, ինչպես ՍՍՌՄ-ն, Չինաստանը։ Նրանք աշխատում են այդ դժվարությունները հաղթահարել «Մարշալլի պլան»-ով, Կորեայում մղվող պատերազմով, սպառազինման

մրցավազքով, արդյունաբերության ռազմականացումով։ Բայց դա շատ է նման այն բանին, որ խեղդվողները ձեռքը ծղոտին են գցում» (էջ 35)։

Կապիտալիստական վերարտադրության բազայի նեղացումը, վաճառանման շուկաների կրճատումը և հումքի ռեզերվների սահմանափակումը, Սովետական Միության, ժողովրդա-դեմոկրատական երկրների ու Չինաստանի տնտեսական հզորության ավելացման պայմաններում ամերիկա-անգլիական իմպերիալիստների կամքից ու նրանց կողմից կազմակերպված զանազան բլոկներից ու պլաններից անկախ, տանում է դեպի կապիտալիստական երկրների միջև հակասությունների սրումն ու խորացումը, տանում է դեպի իմպերիալիստական զավթողական պատերազմների անխուսափելիությունը նրանց միջև։

Սխալ է այն տեսակետը, թե քանի որ աշխարհը բաժանվել է երկու միմյանց հակադիր լագերների և Սովետական Միության գլխավորությամբ սոցիալիզմի ու դեմոկրատիայի լագերը շատ ավելի է ուժեղ քան կապիտալիստականը, ուստի կապիտալիստական լագերի պետությունները ստիպված են միավորվել անգլո-ամերիկյան իմպերիալիստների շուրջը՝ սոցիալիզմի դեմ պայքարելու համար։

Այս տեսակետից է բխում այն ցնորքը, թե ամերիկյան իմպերիալիստներին կհաջողվի միավորել կապիտալիստական երկրներին սոցիալիզմի դեմ, և ստեղծել համաշխարհային տիրապետություն։

Այդ սխալ պնդումը ելնում է ժամանակակից իմպերիալիզմի արտաքին խարուսիկ ու ժամանակավոր վիճակից, զանազան բլոկներից, պակտերից։

Պետք է խորանալ և տեսնել ժամանակակից կապիտալիստական ինչպես տարբեր երկրների միջև, այնպես էլ առանձին երկրների ներսում տեղի ունեցող տնտեսական քաղաքական պրոցեսները ու անել համապատասխան եզրակացություններ։

Ճիշտ է, որ սոցիալիզմի լագերը անհամեմատ հզոր է և անպարտելի, սակայն այդ չի նշանակում, որ դրանով վերանում է կապիտալիստական երկրների անհամաչափ զարգացումը, վերանում է նրանց միջև շահերի հակադրությունը հանուն սոցիալիզմի դեմ պայքարի։

Պատերազմները իմպերիալիզմի ծնունդ են, «պատերազմների անխուսափելիությունը վերացնելու համար հարկավոր է ոչնչացնել իմպերիալիզմը» (էջ 40), հետևարար, քանի որ գոյություն ունի իմպերիալիզմ, ապա չի կարող կապիտալիստական առանձին երկրների միջև պատերազմներ չծագել։

Ընկեր Ստալինի աշխատության լույս ընծայումը խոշորագույն իրադարձություն է մեր պարտիայի և սովետական ժողովրդի գաղափարական կյանքում։ Նա պատմական մեծագույն արժեք ունեցող գործ է, որը նոր շրջան է բացում մարքսիստական քաղաքատնտեսության պատմության մեջ։

Ընկեր Ստալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատությունը մարքսիստական-լենինյան քաղաքատնտեսությունը նոր, ավելի բարձր աստիճանի է բարձրացնում, այն սոցիալիզմի քաղաքատնտեսության «Կապիտալ»-ն է, սոցիալիզմից դեպի կոմունիզմ տանող ուղին լուսավորող հանճարեղ ստեղծագործություն։

Ընկեր Ստալինի այս աշխատության երևան գալը վառ ապացույց է այն բանի, թե ինչպիսի մեծ նշանակություն է տալիս մեր պարտիան թեորիային.

«Ռեոլուցիոն թեորիան եղել է, կա և կլինի այն անմար ջահը, որը լուսավորում է մեր պարտիայի և մեր ժողովրդի առաջընթացի ուղին դեպի կոմունիզմի հաղթանակը»,— ասում է ընկեր Մալենկովը։

Ստալինյան այս մեծ աշխատությունը հսկայական ազդեցություն կգործի առաջավոր սովետական գիտության հետագա զարգացման վրա, կօգնի մեր պարտիական, սովետական կադրերին՝ ավելի խորը ուսումնասիրել ու ճանաչել հասարակության զարգացման օրենքները, նա միաժամանակ մեծ դեր կխաղա ժողովրդական դեմոկրատիայի երկրներում՝ սոցիալիզմի կառուցման գործում, արտասահմանյան կոմունիստական ու բանվորական պարտիաների գաղափարական զինման ու կոփման գործում, կոգեշնչի նրանց ազատության ու խաղաղության համար մղվող պայքարում։

Մեր մեծ առաջնորդի ինչպես նախորդ աշխատությունները, այնպես էլ «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատությունը կմտնի համաշխարհային առաջավոր գիտության գանձարանը, որպես մարդկության երջանիկ ապագան կերտող ծրագիր։